



„Չարենցավանի Համայնքային Չարգացման Կենտրոն” ՀԿ-ն իր գործունեությունն իրականացնում է Չեխական կառավարության աջակցությամբ գործող „PEOPLE IN NEED” ԲՀԿ-ի հովանավորությամբ



„Չարենցավանի Համայնքային Չարգացման Կենտրոն” Հ Կ
 Հասցե՝ Կենցաղի տուն,
 6-րդ սենյակ
 Հեռախոս՝ 4 44 05.
 E-mail: cdcch@mail.ru
 Աշխատանքային ժամերը՝ 10:00 – 20:00

“ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ
 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ”
 ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության առաքելությունը. –
 Ունենալ կայուն զարգացող և ակտիվ համայնք:



„Չարենցավանի Համայնքային Զարգացման Կենտրոն” Հասարակական Կազմակերպություն

Կազմակերպության առաքելությունը. –
Ունենալ կայուն զարգացող և ակտիվ համայնք:



Կազմակերպության նպատակները.

- Ակտիվացնել քաղաքացիների մասնակցությունը համայնքի կյանքին
- Ձևավորել ու զարգացնել գործընկերային փոխհարաբերություններ համայնքում գործող կառույցների միջև
- Նպաստել համայնքի սոցիալ-տնտեսական մակարդակի բարձրացմանը

Կազմակերպության նպատակներն իրականացնելու համար գործում են հետևյալ բաժինները.

Սոցիալական բաժին.

Բաժնի գործունեությունն իր մեջ ներառում է զարգացման ծրագրերի մշակում և իրականացում՝ ուղղված հասարակության հետևյալ խմբերին.

1. **Հաշմանդամներ.** մշակել և իրականացնել ծրագրեր, որոնց նպատակն է հաշմանդամների իրավունքների պաշտպանություն, ինտեգրման աշխատանքների կազմակերպում՝ ակտիվացնելով հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը համայնքի կյանքին: Ինչը կնպաստի նաև հասարակության մեջ կարծրատիպերի թուլացմանը:
2. **Տարեցներ.** Մշակել և իրականացնել ծրագրեր, որոնք նպատակ ունեն տարեցներին ակտիվացնել՝ մասնակից դարձնելով նրանց համայնքում տարվող աշխատանքներին, աջակցության ցուցաբերում միայնակ և սոցիալապես անապահով տարեցներին
3. **Կանայք.** մշակել և իրականացնել ծրագրեր ուղղված կանանց իրավունքների պաշտպանությանը, կանանց շրջանում հմտությունների զարգացում, կանանց մասնակցության ապահովում համայնքում տարվող աշխատանքներին
4. **Միգրացիա.** Միգրացիայի հիմնախնդիրների հետ կապված այժմ Կենտրոնը իրականացնում է “Միգրացիայի հարցերով տեղեկատվական Կենտրոն” ծրագիրը: Ծրագրի գործունեությունն ուղղված է ապօրինի միգրացիայի կանխարգելմանն ու ետ վերադարձողների աջակցությանը: Այս ծրագրի շրջանակներում գործում է “Թեժ-գիծ” 4 44 05 ծառայություն, որի միջոցով պոտենցիալ միգրանտները կարող են անվճար տեղեկություններ ստանալ ՌԴ, ԱՊՀ և Եվրոպական երկրների միգրացիոն օրենսդրության վերաբերյալ:

Երիտասարդության հարցերով բաժին.

Այս բաժինը նպատակ ունի մշակվող ծրագրերի իրականացման միջոցով ակտիվացնել երիտասարդների մասնակցությունը համայնքի կյանքին, նպաստել երիտասարդների շրջանում գործազրկության նվազեցմանը, նրանց սոցիալ-տնտեսական վիճակի կայունացմանը, ստեղծագործող երիտասարդների համար զարգացման համապատասխան հնարավորությունների ընձեռմանը: Երիտասարդների շրջանում գործազրկության նվազեցման համար այժմ իրականացվում է

1. **„Բիզնես – ստուդիայի”** ծրագիրը, որը նպատակ ունի նպաստել երիտասարդների շրջանում գործարարության զարգացմանը:

Երիտասարդության հարցերով բաժինը ունի նաև սպազայում իրականացվելիք ծրագրերի փաթեթ, որոնք ներկայացվում են ստորև.

- Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն
- Ստեղծագործող երիտասարդների համար խմբակների ստեղծում, մրցույթ-փառատոների կազմակերպում և այլ տիպի միջոցառումներ
- Երիտասարդների մոտ մասնագիտական հմտությունների զարգացում
- Երիտասարդների մասնակցությամբ համայնքում սպորտային, մշակութային միջոցառումների կազմակերպում՝ ի նպաստ համայնքում սպորտի և մշակույթի զարգացմանը
- Երիտասարդների համար մի շարք թեմաներով (թրաֆիքինգ, ծնողավարման հմտություններ, ամուսնական փոխհարաբերություններ և այլն) սեմինարների, քննարկումների կազմակերպում երիտասարդության մեջ իրազեկության բարձրացման նպատակով:

Իրավաբանական բաժին

Բաժնի գործունեության նպատակն է անվճար իրավաբանական խորհրդատվության տրամադրումը համայնքի բնակիչներին:

Շնորհակալ զարգացման ծրագրերի բաժին.

Բաժնի գործունեության նպատակն է մշակել և իրականացնել բազմառոտ ծրագրեր (կրթական, առողջապահական, բնապահպանական, ժամանցային և այլն) համայնքի ակտիվացման ու զարգացման համար:



„Չարենցավանի Համայնքային
Զարգացման Կենտրոն” Հ Կ
Հասցե՝ Կենցաղի տուն,
6-րդ սենյակ
Հեռախոս՝ 4 44 05.
E-mail: cdcch@mail.ru
Աշխատանքային ժամերը
10:00 – 20:00